ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԼԽԱՎՈՐ ԴԱՏԱԽԱԶ

ՀՐԱՄԱՆ № 91-Լ

«03» 11 2023 թ. ք. Երևան

«ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՀԱՐՑԱՇԱՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների ատեստավորման գործընթացը հստակեցնելու նպատակով, ղեկավարվելով «Դատախազության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 2-րդ մասի 7-րդ կետով, 30-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով և 50-րդ հոդվածով՝

Հրամայում եմ՝

1. Հաստատել «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքով նախատեսված գործառույթներ իրականացնող դատախազների ատեստավորում անցկացնելու հարցաշարը՝ համաձայն հավելվածի (կցվում է):

2. Սույն հրամանի կատարման վերահսկողությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

4. Սույն հրամանի պատճենն ուղարկել Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի տեղակալներին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազության վարչությունների պետերին, ավագ դատախազին, Երևան քաղաքի դատախազի

պաշտոնակատարին, Երևան քաղաքի վարչական շրջանների և մարզերի դատախազներին, կայազորների զինվորական դատախազներին, Հայաստանի Հանրապետության զինվորական կենտրոնական դատախազության բաժինների պետերին, ավագ դատախազներին, Հայաստանի Հանրապետության դատախազության գլխավոր քարտուղարին, Հայաստանի Հանրապետության գլխավոր դատախազի խորհրդականներին ու օգնականներին:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ԵՐՐՈՐԴ
ԴԱՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԿԱՆ **Ա. ՎԱՐԴԱՊԵՏՅԱՆ**

Հավելված

Հայաստանի Հանրապետության
գլխավոր դատախազի
2023 թվականի նոյեմբերի 3 -ի
թիվ «91-ն հրամանի

Ծանոթություն

Սույն հարցաշարում ընդգրկված հարցերի լիարժեք պատասխանները պետք է ներառեն դրանց օրենսդրական կարգավորումները, դրանց վերաբերյալ Մարդու իրավունքների եվրոպական դատարանի, Սահմանադրական դատարանի, Վճռաբեկ դատարանի, ՀՀ դատախազության կոլեգիայի որոշումներով և ՀՀ գլխավոր դատախազի հրամաններով սահմանված կանոններն ու դիրքորոշումները:

ՀԱՐՑԱՇԱՐ

«ԱՊՕՐԻՆԻ ԾԱԳՈՒՄ ՈՒՆԵՑՈՂ ԳՈՒՅՔԻ ԲՌՆԱԳԱՆՁՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂ ԴԱՏԱԽԱԶՆԵՐԻ ԱՏԵՍՏԱՎՈՐՈՒՄ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ

Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն

1) Հայաստանի Հանրապետության սահմանադրական կարգի հիմունքները.
2) Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները.
3) Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքների և ազատությունների սահմանափակման սահմանադրական հիմքերը,
4) Համաչափության և իրավական որոշակիության սահմանադրական սկզբունքները.
5) ՀՀ նախագահի սահմանադրաիրավական կարգավիճակը.
6) ՀՀ Ազգային ժողովը.
7) ՀՀ Կառավարությունը.
8) ՀՀ Բարձրագույն դատական խորհուրդը.
9) ՀՀ դատական համակարգը.
10) ՀՀ Սահմանադրական դատարանը.
11) ՀՀ դատախազության և քննչական մարմինների սահմանադրաիրավական կարգավիճակը.

Եվրոպական կոնվենցիա և Եվրոպական դատարանի նախադեպային իրավունք

12) Եվրոպական դատարանի որոշումների իրավաբանական բնույթը և նշանակությունը ՀՀ իրավական համակարգում.
13) Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները արդար դատաքննության իրավունքի վերաբերյալ. գործերի քննությունը ողջամիտ ժամկետում.
14) Եվրոպական դատարանի իրավական դիրքորոշումները սեփականության պաշտպանության վերաբերյալ.
15) Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման ինստիտուտի կանոնակարգումը միջազգային փաստաթղթերով.

16) Առանց մեղադրական դատավճռի գույքի բռնագանձման և ՄԻԵԿ-ի 6-րդ և 7-րդ հոդվածների իմաստով քրեական պատժի/մեղադրանքի հարաբերակցությունը.

17) ՄԻԵԿ-ի 1-ին արձանագրության 1-ին հոդվածով ամրագրված իրավունքի (միջամտությունը սեփականության իրավունքին) միջամտության թույլատրելի կանոններն՝ ըստ ՄԻԵԴ-ի նախադեպային իրավունքի.

18) Գույքի բռնագանձման վերաբերյալ կարգավորումները ՄԱԿ-ի «Կոռուպցիայի դեմ» կոնվենցիայի շրջանակներում.

19) Գույքի բռնագանձման վերաբերյալ կարգավորումները «Հանցավոր ճանապարհով ստացված եկամուտների լվացման, հետախուզման, առգրավման ու բռնագրավման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Վարշավայի կոնվենցիայի շրջանակներում.

20) Գույքի բռնագանձման վերաբերյալ կարգավորումները ԵՄ 2014/42 դիրեկտիվի շրջանակներում.

21) Գույքի բռնագանձման վերաբերյալ կարգավորումները ԵԽ խորհրդարանական վեհաժողովի 2218 (2018) բանաձևի շրջանակներում.

22) Գույքի բռնագանձման վերաբերյալ կարգավորումները ՖԱԹՖ հանձնարարականների շրջանակներում.

«Դատախազության մասին» օրենք

23) Հայաստանի Հանրապետության դատախազության գործունեության սկզբունքները.

24) Հայաստանի Հանրապետության դատախազության համակարգը.

25) ՀՀ գլխավոր դատախազը.

26) Քրեական հետապնդում հարուցելը.

27) Հսկողությունը մինչդատական քրեական վարույթի օրինականության նկատմամբ.

28) Մեղադրանքի պաշտպանությունը դատարանում.

29) Դատարանների վճիռների, դատավճիռների և որոշումների բողոքարկումը.

30) Պետական շահերի պաշտպանությունը.

31) Դատախազական ակտերը.

32) Հայաստանի Հանրապետության դատախազությունում ծառայողական ենթակայությունը և դասային աստիճանները.

33) Դատախազի իրավունքներն ու պարտականությունները.

34) Դատախազի խրախուսումն ու կարգապահական պատասխանատվությունը.

Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգիրք

35) ՀՀ քրեական օրենսդրության սկզբունքները.

36) Քրեական օրենքի գործողությունը ժամանակի ընթացքում և տարածության մեջ.

37) Հանցանքի հասկացությունը և տեսակները.

38) Հանցագործության տեսակները. շարունակվող և տևող հանցագործությունները.

39) Քրեական պատասխանատվության սուբյեկտը.

40) Մեղսունակություն, սահմանափակ մեղսունակություն.

41) Քրեական պատասխանատվությունը բացառող հանգամանքները.

42) Քրեական պատասխանատվությունից ազատելը.

43) Համաներում, ներում, դատվածություն.

44) Հանցավոր ծագում ունեցող գույքի, եկամտի և այլ տեսակի օգուտի, հանցագործության գործիքի, միջոցի և առարկայի բռնագրավումը.

45) Իրավաբանական անձանց քրեական պատասխանատվությունը.

46) Հանցագործությունն իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով կատարելը.

47) Ընտրակաշառք ստանալու քրեաիրավական բնութագիրը.

48) Ընտրակաշառք տալու քրեաիրավական բնութագիրը.

49) Ընտրակաշառքի միջնորդության քրեաիրավական բնութագիրը.

50) Ավազակության քրեաիրավական բնութագիրը.

51) Կողոպուտի քրեաիրավական բնութագիրը.

52) Խարդախության քրեաիրավական բնութագիրը.

53) Համակարգչային հափշտակության քրեաիրավական բնութագիրը.

54) Շորթման քրեաիրավական բնութագիրը.

55) Ծառայողական կամ մասնագիտական պարտականությունները կատարելու համար ապօրինի վարձատրություն ստանալու կամ պահանջելու քրեաիրավական բնութագիրը.

56) Ֆինանսական բուրգ ստեղծելու, կազմակերպելու կամ ղեկավարելու քրեաիրավական բնութագիրը.

57) Հակամրցակցային գործունեության քրեաիրավական բնութագիրը.

58) Փողերի լվացման քրեաիրավական բնութագիրը.

59) Ահաբեկչության քրեաիրավական բնութագիրը.

60) Հանցավոր կազմակերպություն ստեղծելու կամ ղեկավարելու քրեաիրավական բնութագիրը.

61) Հանցավոր կազմակերպությանը մասնակցելու քրեաիրավական բնութագիրը.

62) Քրեական ենթամշակույթ կրող խմբավորում ստեղծելու կամ ղեկավարելու քրեաիրավական բնութագիրը.

63) Քրեական ենթամշակույթ կրող խմբավորմանը մասնակցելու կամ ներգրավելու քրեաիրավական բնութագիրը.

64) Քրեական ենթամշակույթ կրող խմբավորման մասնակցին կամ քրեական աստիճանակարգության բարձրագույն կարգավիճակ ունեցող անձին դիմելու քրեաիրավական բնութագիրը.

65) Թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի, դրանց պատրաստուկների կամ դրանց համարժեք նյութերի (անալոգի) կամ դրանց ածանցյալների իրացնելու նպատակով ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու քրեաիրավական բնութագիրը.

66) Թմրամիջոցներ, հոգեմետ (հոգեներգործուն) նյութեր, դրանց պատրաստուկներ կամ դրանց համարժեք նյութեր (անալոգ) պատրաստելու նպատակով պրեկուրսորների ապօրինի շրջանառության, իրացնելու նպատակով պրեկուրսորների ապօրինի շրջանառության կամ դրանք ապօրինի իրացնելու քրեաիրավական բնութագիրը.

67) Կաշառք ստանալու քրեաիրավական բնութագիրը.

68) Կաշառք տալու քրեաիրավական բնութագիրը.

69) Կաշառքի միջնորդության քրեաիրավական բնութագիրը.

70) Պաշտոնատար անձի կողմից իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը չարաշահելու կամ լիազորություններն անցնելու քրեաիրավական բնութագիրը.

71) Ապօրինի հարստանալու քրեաիրավական բնութագիրը.

72) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված՝ հայտարարագիր ներկայացնելու պարտականություն ունեցող անձի կողմից

հայտարարագրում կեղծ տվյալներ ներկայացնելու, հայտարարագրման ենթակա տվյալները թաքցնելու կամ հայտարարագիր չներկայացնելու քրեաիրավական բնութագիրը.

73) Պաշտոնեական կեղծիքի քրեաիրավական բնութագիրը.

74) Ակնհայտ անարդար դատավճիռ, վճիռ կամ դատական այլ ակտ կայացնելու քրեաիրավական բնութագիրը.

75) Արդարադատության իրականացմանը կամ գործի քննությանը միջամտելու քրեաիրավական բնութագիրը.

76) Ուսումնասիրության ընթացքում կեղծ հայտարարագիր ներկայացնելու քրեաիրավական բնութագիրը.

77) Իշխանազանցության կամ իշխանությունը չարաշահելու քրեաիրավական բնութագիրը.

<u>Քրեական դատավարության օրենսգիրք</u>

78) «Բնակարան» հասկացությունը.

79) Մասնավոր և ընտանեկան կյանքի գաղտնիությունը.

80) Ապացույցների հասկացությունը, ապացույցների թույլատրելիությունը և դրանց օգտագործման սահմանափակումները.

81) Ապացույցների տեսակները.

82) Գույքային հայցը.

83) Դատավարական ժամկետները քրեական դատավարությունում.

84) Քրեական վարույթ նախաձեռնելը

85) Հանրային քրեական հետապնդումը.

86) Քրեական գործով վարույթի կասեցման հիմքերը.

87) Քրեական հետապնդումը բացառող հանգամանքները.

88) Ապացուցողական գործողությունների կատարման դատական երաշխիքները.

89) Սեփականության իրավունքի սահմանափակման դատական երաշխիքները.

90) Վարույթի հանրային մասնակիցների վարութային ակտերի (մինչդատական ակտերի) իրավաչափության դատական երաշխիքները.

91) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործընթացին աջակցելու նպատակով ձեռնարկվող օպերատիվ-հետախուզական գործունեությունը.

92) Իրավաբանական անձի վերաբերյալ վարույթը.

<u>Քաղաքացիական օրենսգիրք</u>

93) Քաղաքացիական իրավունքի հասկացությունը և խնդիրները.

94) Քաղաքացիական իրավունքի սկզբունքների հասկացությունը, նշանակությունը և դասակարգումը.

95) Քաղաքացիական իրավահարաբերությունների ծագման հիմքերը.

96) Իրավաբանական անձի հասկացությունը և հատկանիշները.

97) Իրավաբանական անձանց տեսակները.

98) Պետության, համայնքների և մարզերի իրավունակությունն ու քաղաքացիական իրավահարաբերություններին մասնակցության ձևերը.

99) Քաղաքացիական իրավունքի օբյեկտների հասկացությունը և տեսակները ըստ ՀՀ քաղաքացիական օրենսդրության.

100) Իրերի հասկացությունը, դասակարգումը և դրա իրավական նշանակությունը.

101) Դրամական միջոցները որպես քաղաքացիական իրավունքի օբյեկտ.

102) Արժեթղթերի հասկացությունը, տեսակները ու դրանց ընդհանուր բնութագիրը.

103) Առևտրային գաղտնիքի իրավական պահպանությունը.

104) Սեփականության իրավունքի հասկացությունը և բովանդակությունը.

105) Սեփականության իրավունքի ձեռք բերման հիմքերը.

106) Պտուղների, եկամուտների և տիրազուրկ գույքի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման կարգը: Պայմանագրով գույք ձեռք բերելը որպես սեփականության իրավունքի առաջացման հիմք.

107) Ինքնակամ կառույցի նկատմամբ սեփականության իրավունքի ձեռքբերման կարգը.

108) Սեփականության իրավունքի դադարելը սեփականատիրոջ կամքով, սեփականության իրավունքի դադարելը սեփականատիրոջ կամքին հակառակ կամ նրա կամքից անկախ.

109) Քաղաքացիների սեփականության իրավունքի առանձնահատկությունները.

110) Պետական սեփականության իրավունքի առանձնահատկությունները.

111) Իրավաբանական անձանց սեփականության իրավունքի առանձնահատկությունները.

112) Ընդհանուր սեփականության իրավունքի հասկացությունը և առաջացման հիմքերը.

113) Ընդհանուր բաժնային սեփականության իրավունք.

114) Ընդհանուր համատեղ սեփականության իրավունք.

115) Սեփականության իրավունքի պաշտպանության քաղաքացիաիրավական եղանակները.

116) Ապօրինի շինարարության և ինքնակամ կառույցի հասկացությունը, կարգավիճակը.

117) Գործարքի հասկացությունը, գործարքի տեսակները և ձևը.

118) Գործարքի վավերության պայմանները.

119) Գործարքի անվավերության հասկացությունը: Անվավեր գործարքի տեսակներն ու հետևանքները.

120) Հայցային վաղեմություն.

121) Պարտավորության հասկացությունը, տեսակները և տարրերը.

122) Պայմանագիրը փոփոխելը և լուծելը.

123) Պարտավորությունների կատարման հասկացությունը, կատարումն ապահովելու միջոցները:

124) Պարտավորությունների դադարումը.

125) Քաղաքացիաիրավական պատասխանատվության տեսակները և հիմքերը.

126) Վնաս պատճառելու համար պատասխանատվության հիմքերը.

127) Անհիմն հարստացման հետևանքով ծագող պարտավորության հասկացությունը և տեսակները.

128) Ժառանգությունն ըստ օրենքի և ըստ կտակի.

<u>Քաղաքացիական դատավարության օրենսգիրք</u>

129) Քաղաքացիական դատավարության սկզբունքների հասկացությունը, տեսակները և նշանակությունը.

130) Դատավորին բացարկ հայտնելը և դատավորի ինքնաբացարկը.

131) Կողմերի հասկացությունը, նրանց դատավարական իրավունքները և պարտականությունները քաղաքացիական դատավարությունում.

132) Երրորդ անձանց հասկացությունը: Վեճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ ներկայացնող և չներկայացնող երրորդ անձինք.

133) Քաղաքացիական դատավարությանը դատախազի մասնակցության հիմքերը.

134) Դատախազի կարգավիճակը քաղաքացիական դատավարությունում.

135) Հայցային վարույթի հասկացությունը և էությունը.

136) Հայցի հասկացությունը: Հայցի տարրերը և հայցի հարուցման իրավունքը.

137) Հայցի ապահովումը, նախնական ապահովումը և հակընդդեմ ապահովումը.

138) Նախնական դատական նիստը և նախնական դատական նիստում լուծման ենթական հարցերի շրջանակը.

139) Հայցային վաղեմություն կիրառելու մասին միջնորդությունը և դրա քննությունը նախնական դատական նիստում.

140) Հայցի առարկան և հիմքը փոփոխելը.

141) Գործը դռնփակ դատական նիստում քննելու կարգը.

142) Հաշտության համաձայնությունը քաղաքացիական դատավարությունում.

143) Ապացույցների ապահովումը քաղաքացիական դատավարությունում.

144) Ապացույցների հասկացությունը և տեսակները քաղաքացիական դատավարությունում.

145) Ապացուցման բեռը քաղաքացիական դատավարությունում.

146) Ապացուցելուց ազատելու հիմքերը.

147) Ապացուցման պարտականությունը.

148) Ապացույցներ պահանջելու դատավարական կարգը քաղաքացիական դատավարությունում.

149) Ապացույցների վերաբերելիությունը և թույլատրելիությունը քաղաքացիական դատավարությունում.

150) Ապացույցների հետազոտումը և գնահատումը քաղաքացիական դատավարությունում.

151) Նախադատելի փաստերը քաղաքացիական դատավարությունում.

152) Գրավոր ապացույցները քաղաքացիական դատավարությունում.

153) Իրեղեն ապացույցները քաղաքացիական դատավարությունում.

154) Դատական փորձաքննության հասկացությունը, տեսակները և նշանակման կարգը քաղաքացիական դատավարությունում:

155) Գործի քննության կարգն առաջին ատյանի դատարանում քաղաքացիական դատավարության շրջանակներում.

156) Դատական սանկցիաները քաղաքացիական դատավարությունում.

157) Գործի քննության հետաձգումը քաղաքացիական դատավարությունում.

158) Գործի վարույթի կասեցումը քաղաքացիական դատավարությունում.

159) Դատական ակտի բողոքարկման հիմքերը վերաքննիչ դատարանում.

160) Դատական ակտը նոր երևան եկած հանգամանքներով վերանայելու վարույթը քաղաքացիական դատավարությունում.

161) Նոր հանգամանքներով վճիռների և որոշումների վերանայման վարույթը քաղաքացիական դատավարությունում.

162) Վերաքննիչ վարույթի ընդհանուր բնութագիրը և վերաքննիչ բողոքարկման իրավունքը.

163) Վերաքննիչ բողոք բերելու կարգը քաղաքացիական դատավարությունում.

164) Վճռաբեկ բողոք բերելու կարգը քաղաքացիական դատավարությունում.

165) Վճռաբեկ բողոք բերելու հիմքերը քաղաքացիական դատավարությունում.

166) Վճռաբեկ բողոքը վարույթ ընդունելու հիմքերը.

167) Դատախազի կողմից դատական ակտերի բողոքարկումը վերաքննության և վճռաբեկության կարգով քաղաքացիական դատավարությունում.

168) Վերաքննության և վճռաբեկության սահմանները վերաքննիչ և վճռաբեկ դատարաններում, նոր ապացույցների ընդունումը վերաքննիչ դատարանի կողմից.

169) Բեկանված եզրափակիչ դատական ակտով գործերի նոր քննության կարգը և նոր քննության սահմանները.

170) Օտարերկրյա դատարանների և արբիտրաժների վճիռների ճանաչումը և կատարումը քաղաքացիական դատավարությունում.

<u>Պետական շահերի պաշտպանություն</u>

171) Քաղաքացիական և վարչական դատավարությունում դատախազի կարգավիճակը և մասնակցության հիմքերը.

172) Պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու նպատակով կամ հայց հարուցելիս դատախազի իրավունքները.

173) Դատախազի կողմից պետական շահերի պաշտպանության հայց հարուցելու հիմքերը և հայցի տեսակները.

174) Կատարողական վարույթի հարուցման հիմքերը և կարգը.

175) Կատարողական վարույթի հարուցման ժամկետները.

176) Հարկադիր կատարողի որոշումները և դրանց բողոքարկումը.

<u>«Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենք</u>

177) Ապօրինի ծագում ունեցող գույքի և անձին պատկանող գույքի հասկացությունները.

178) Իրական շահառուի և փոխկապակցվածության հասկացությունները.

179) Առանց մեղադրական դատավճռի ապօրինի գույքի բռնագանձման օրենսդրական մոդելները և «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի տեղը այդ մոդելների ներքո.

180) «Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման մասին» օրենքի գործողությունը ժամանակի մեջ.

181) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի փուլերը.

182) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու նպատակով ուսումնասիրություն սկսելը և դրա հիմքերը.

183) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու նպատակով ուսումնասիրության սահմաններն ու իրականացման ժամկետները.

184) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու նպատակով ուսումնասիրության գաղտնիությունը և ուսումնասիրության ընթացքում օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունների հավաքումը.

185) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու նպատակով ուսումնասիրության ընթացքում օրենքով պահպանվող գաղտնի տեղեկությունների հավաքման նկատմամբ դատական վերահսկողության կառուցակարգը.

186) Քրեական վարույթին զուգահեռ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայց հարուցելու նպատակով ուսումնասիրություն իրականացնելու առանձնահատկությունները.

187) Իրավասու մարմնի լիազորություններն ուսումնասիրություն իրականացնելիս և ուսումնասիրության արդյունքների նախնական ամփոփումը.

188) Գույքի նկատմամբ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառումը և ապացույցների ապահովումը.

189) Գույքի նկատմամբ հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման առանձնահատկությունները, ապահովման վերացման հիմքերը, կարգը և հարաբերակցությունը ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով սահմանված՝

հայցի նախնական ապահովման միջոցների կիրառման և վերացման վերաբերյալ կարգավորումների հետ.

190) Շահագրգիռ անձանց ծանուցումը.

191) Ուսումնասիրության արդյունքների վերջնական ամփոփումը և եզրակացության կազմումը.

192) Ուսումնասիրությունը հաշտության համաձայնությամբ ավարտելը.

193) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցը.

194) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հայցի քննությունը դատարանում.

195) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վարույթի շրջանակներում ապացուցման առանձնահատկությունները.

196) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը գույքը ձեռք բերողից.

197) Գույքը բարեխիղճ ձեռք բերողը և նրա գույքի բռնագանձման անթույլատրելիության վերաբերյալ կարգավորումները.

198) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման վերաբերյալ վճռի կայացումը.

199) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը.

200) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձումը բնեղենով և կոմպենսացիա.

201) Պետության տիրապետությանը հանձնված գույքի կառավարումը և օտարումը.

202) Ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման հարցերով միջազգային համագործակցությունը: